



ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԽԱՐԱԿԻ

Հայագիտություն

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

Арменоведение

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

Armenian Studies

1

2017

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱԲԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱԲԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНОВЕДЕНИЕ

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
ARMENIAN STUDIES

ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (22)

ԵՐԵՎԱՆ - 2017

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. АРМЕНОВЕДЕНИЕ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. ARMENIAN STUDI

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.
Խմբագրական խորհուրդ.

Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Գալստյան Ս. Ա., Գոնչար
Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քար-
տուղար*), Մինասյան Է. Գ., Մովսիսյան Ա. Ե., Պետրոսյան Վ. Զ., Միմո-
նյան Ա. Հ., Քալանթարյան Ժ. Ա.

Главный редактор: **Мирзоян Г. К.**
Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Галстян С. А.**, **Гончар Н. А.**
(*зам. главного редактора*), **Калантарян Ж. А.**, **Минасян Э. Г.**, **Мовсисян**
А. Е., **Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Петросян В. З.**, **Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**
Editorial Board:

Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), **Galstyan S. A.**, **Gonchar N. A.**
(*Deputy editor-in-chief*), **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Kalan-
taryan Zh. A.**, **Minasyan E. G.**, **Movsisyan A. Y.**, **Petrosyan V. Z.**, **Simon-
yan A. H.**

ԱԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՅԱՆ

Հայ ժողովրդական հավատալիքներից և սնահավատական գրույցներից մեզ հայտնի է չար ոգիների մի տեսակ, որոնց գործողություններն ուղղված են ծննդկանի և նորածնի դեմ¹: Նրանց էին վերագրվում ծննդկանի մահը, նորածինների զանազան հիվանդությունները, մասնավորապես՝ հանկարծամահությունը:

Աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները, իրենց կրոնին զուգահեռ, ունեն հավատալիքների համակարգ, որը «իրենից ներկայացնում է ստորին կարգի առասպելաբանություն. այն հանդես է գալիս հոգու հավատքի ու մեռելների պաշտամունքի, ֆիզիկական երևույթների, բնության առարկաների պաշտամունքի ու առասպելաբանական ըմբռնումների, դևերի հավատքի և դյութապաշտության մեջ»²: Մեր ժողովուրդը, դարեր շարունակ ապրելով քրիստոնյա և այլակրոն տարբեր ժողովուրդների հարևանությամբ, անշուշտ, կրել է որոշակի ազդեցություն նաև ժողովրդական հավատալիքների առումով: Այս է պատճառը, որ վերջիններիս շուրջ հյուսված սնահավատական գրույցների զուգահեռները հաճախ տեսնում ենք հարևան և հնդեվրոպական այլ ժողովուրդների գրավոր ու բանավոր ավանդության մեջ:

Ծննդկանի ու նորածնի՝ չար ոգիների ազդեցությանը ենթարկվելու հավատալիքային հիմքի վրա էլ ձևավորվել են զանազան առասպելական պատկերացումներ, գրույցներ, ծիսահմայական արարողություններ ու արգելքներ, որոնց կիրառությամբ ջանացել են ծննդաբերության ցավերից թուլացած ծննդկանին և մանավանդ թույլ ու անօգնական նորածնին գերծ պահել նրանց սպառնացող զանազան վտանգներից ու հիվանդություններից³:

Ժողովրդի պատկերացմամբ՝ չարքերով ու դևերով էր լցված հատկապես հղի և ծննդաբերող կնոջ շրջապատը: Ծնունդն ընդունող բժիշկ-մանկաբարձների դերը ստանձնում էին տղևտ պատավները (տատմայրեր, դայակներ և այլք), որոնք շատ հաճախ դառնում էին ծննդկանների և նորածինների մահվան պատճառ՝ այդ դժբախտությունը վերագրելով տարատեսակ չարքերի: Հայ պատմիչների երկերում, ախթարքներում, ժողովրդական աղոթքներում, հեքիաթներում, բանահյուսական ու ազգագրական գրավոր աղբյուրներում և բանավոր ավանդության մեջ

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 95:

² Նույն տեղում, էջ 13:

³ Տե՛ս Մ. Հարությունյան, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., 2006, էջ 302:

պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ այդ ոգիների, նրանցից զգուշանալու, պաշտպանվելու, նրանցից սպասվող վնասներն ու հիվանդությունները հաղթահարելու միջոցների ու եղանակների մասին: «Չիլ ու Քեօտ» (Չարսանճագ), «Չօբանա նաղլը» (Մեղրի) և այլ հեքիաթներում «բարի ոգիների կողքին հայերը ճանաչում էին նաև չար ոգիներին՝ սատանաներին, որոնց համարում էին տարբեր հիվանդությունների հարուցիչ: Անսալով սատանայի աղաչանքին («Ի սեր աստծու աղ քարը վիր պատեր, ինձ ազադէր»)՝ չոբանը նրան հանում է քարի տակից: Ի նշան երախտագիտության՝ սատանան չոբանին օժտում է ամենաձանր հիվանդությունները բուժելու մենաշնորհով: Սատանան մտնում է թագավորի որդու (ղասեր) փորը: Թագավորը դիմում է աշխարհի լավագույն բժիշկների օգնությանը, բայց՝ ապարդյուն: Միայն «հայտնի հեքիմ» դարձած չոբանն է կարողանում «ալուզի» (հիվանդության) «հախիցը գալ»: Ապաքինումը կատարվում է ծիսահմայական բժշկության մեջ հայտնի խաչակնքված ջրի մաքրագործող գորությամբ»⁴:

Խոսելով ալերի մասին՝ Ալիշանը տալիս է հետևյալ բացատրությունը. «Որպես հասարակ բառ «ալք»-ը նշանակում է «անդունդների նման խոր տեղեր»⁵ և հնչմամբ նման է գործերի, գերմանացիների և նրանց համալեզուների Hell բառին, որ նշանակում է «դժոխք»: Հյուսիսցիների դժոխքի դիցուհին էլ էր կոչվում Հել՝ համապատասխան ալերի բնակության վայրերին»⁶:

Ալերի առաջացման մասին Ջավախքում կանայք պատմում էին հետևյալ առասպելը. «Աստված օր Աթամին ստեղծեց, անոր ընկեր ա Ալին ստեղծեց: Ասիկ հրեղեն էր, միաչքանի: Աթամ մարմնեղեն, Ալը՝ հրեղեն, հեչ իրար չէին սազե, ատոր համար ա Աթամը հեչ չէր սիրե Ալին: Աստված տեսավ, օր Ալ չկրցավ ընկերութեն էնե Աթամին հետ, Եվային ստեղծեց: Ատ վախտվանից Ալը դյուշման ընկավ Եվային ու անոր ջնսին»⁷:

Տարբեր ժողովուրդների հավատալիքներում «ալ» ոգին հանդես է գալիս հետևյալ նույնարմատ անուններով՝ ալբաստի (տաջիկներ), ալ նար (լեզգիներ), ալի (վրացիներ), ալա ժեն (թալիշներ), հալ (ուդիներ), ալք (թրդեր), ալմազի (ինգուշներ, չեչեններ), ալմաս (մոնղոլական ժողովուրդներ), ալբաստ, ալվաստի (Կազանի, Ղրիմի թաթարներ, բաշկիրներ, ուզբեկներ) և այլն⁸:

Արեդյանի կարծիքով, հայկական ալերը պատկանում են ոգիների

⁴ Թ. Հայրապետյան, Բուժման ծիսահմայական և կենսաֆիզիկական ցուցիչները հայ ժողովրդական հեքիաթներում // Պատմա-բանասիրական հանդես, № 2 (172), Եր., 2006, էջ 169:

⁵ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան(այսուհետ՝ ՀԱԲ), Ա հատոր, Եր., 1971, էջ 96:

⁶ Ղ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 116:

⁷ Ե. Լալայան, Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 236:

⁸ St u Басилов В. Н. Албасты // "Мифы народов мира". Энциклопедия. Том 1, М., 1987, էջ 58, Բենրուզ Սոհամանաղ Ռոստրարաթի Քելարի, Գալեշների ժողովրդական հավատալիքները, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2012, էջ 16:

այն տեսակին, որոնցից են հոռմեական ստրինգներն ու սիլվանները: Նրանցից պաշտպանվելու միջոցները մեծ մասամբ նույնն են կայծակի խորհրդանիշներ և այնպիսի առարկաներ, որոնք դիվահալած գորույթ-յուն ունեն⁹:

Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում գործածում էին զանազան միջոցներ ու հնարքներ՝ ծննդկանին ու նորածնին չար ոգի-ներից պաշտպանելու համար: Համատարած բնույթ էր կրում ծննդկա-նի բարձի տակ Նարեկի¹⁰, Ավետարանների¹¹, Գիպրիանոսի¹², նշխար-քի կամ հացի և տարբեր հմայիլների, ծննդկանի մոտ և նրա սենյակում չարահալած հատկանիշ ունեցող տարատեսակ իրերի (խաչերկաթ, շղթա, պարան, բանալի, պողպատե մատանի, սանդեքք, ճրագ, խոզի մազ, հրացան, սոխ, սխտոր, աղ, մոխիր, անուխ) և սուր ծակող ու կտրող մետաղյա առարկաների (դանակ, դաշույն, շամփուր, ակիշ, շիշ, ասեղ, մկրատ, քորոց և այլն) առկայությունը: «Մետաղյա, հատկապես երկաթյա իրերը օժտված էին գերբնական, վերերկրային հատկություն-ներով, դառնում էին յուրահատուկ պահպանակներ, չարխափան մի-ջոցներ, սրբագործված առարկաներ ու ծիսական որոշակի արարո-ղությունների օբյեկտներ»¹³:

Աճառյանը ալերի հիմնական գործառույթը ներկայացնում է հետև-յալ կերպ. «Տղացկաններուն սիրտն ու թոքը կը փրցնեն, նորածինները կը հոշոտեն, իսկ երիտասարդները կչարչարեն՝ անոնց քնած ժամա-նակ վրանին նստելով ու խեղդելով»¹⁴:

Շիրակում պատմվում էր հետևյալ գրույցը. «Աբոյի մոտիկ հարևա-նի հարսը նոր ծննդկան է եղել, գլխի տակը «համայիլ» ու «Գիպրիա-նոս» չեն դրել. տան մարդիկն էլ իրանց գործով զբաղված լինելով՝ «ղնն եկել նրա ցիկեարը (լեարդը) տարել է և նա իսկույն ավանդել է հոգին: Այժմ այդ լացն ու թացը նորա մահվան տխուր ողբերգակն է, որ կատա-րում են նրա ցավակից ազգականներն ու բարեկամները»¹⁵:

Ըստ սնահավատական գրույցներում առկա հավատալիքների՝ ա-լերից պաշտպանվելու միջոց էր համարվում նաև այն ընտանիքների անդամների կամ նրանց տներից տարատեսակ իրերի ներկայությունը ծննդաբերության ժամանակ, որոնք իբր թե ալ են բռնել և բաց թողել, փոխարենը ստացել այլևս իրենց տանը չմտենալու երդում: Այսպիսի

⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 96:

¹⁰ Տե՛ս Ա. Աթայեան, Մարմատ, Նոր Ջուղա, 1906, էջ 103:

¹¹ Տե՛ս Լ. Մինասեան, Գիւղական բառ ու բան, Փերիա գաւառ, Նոր Ջուղա, 1998, էջ 233:

¹² Տե՛ս Աղ. Մխիթարեանց, Փշրանք Շիրակի ամբարներից, Էմինեան ազգա-գրական ժողովածու (այսուհետ՝ ԷԱԺ), հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, 1901, էջ 195:

¹³ Գ. Աղանյան, Երկաթը և երկաթագործական առարկաները հայ ժողովրդական հավատալիքներում, Գիտական աշխատություններ, հ. VII, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2004, էջ 65:

¹⁴ Հր. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան (այսուհետ՝ ՀԳԲ), ԷԱԺ, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 53:

¹⁵ ԷԱԺ, հ. Ա, էջ 195-196:

մի գրույց էր պատմվում Ակնում՝ Քեչյանների գերդաստանի մասին. «Մի վերի թաղն Քեչեաններէն քաջասիրտ անձ մի, ի լեառն, Ալին հանդիպելով, որոյ ձեռքը տղացկանի սիրտ մի կայ եղեր՝ մարտնչած է հետն, և Ալն խոստացած է բնաւ Քեչեանի տունն ոտք չկոխել. և եթէ տղացկանի մի տունն Քեչեանի տնէն գիրք, բնեռ, մկրատ կամ այլ իր մը գտնուի՝ այն տունն չի մտնել: Ուստի այս ավանդութեան համեմատ, այժմ իսկ Քեչեանց տունէն գիրք և այլն տանելով՝ ծննդաբերին անկողնոյ և բարձին ներքն կը դնեն կամ տղացկանն իւր վրա կը պահէ մինչև 40 օր, զի վտանգն 40 օրուան մեջ է եղեր»¹⁶:

Ալ բռնած և հպատակեցրած տները կոչվել են «ալի օջախ»¹⁷: Հաճախ «ալի օջախից» կանանց էին հրավիրում՝ ծննդաբերությանը ներկա գտնվելու: Նրանք իրենց տնից հետները տանում էին մոխիր, հաց, աղ: Մոխիրն ու հացը դնում էին ծննդկանի բարձի տակ, իսկ աղից մի քիչ ցանում էին դռան շեմին, լցնում էին հոսող ջրի մեջ, մի բուռ էլ կրակի մեջ: Եթէ ճայթոցով վառվեր, նշանակում էր, որ ծնունդը հեշտ է անցնելու, իսկ եթէ անձայն՝ գործի էին դնում իրենց հնարքներն ու միջոցները՝ ծննդկանին օգնելու համար¹⁸:

Ալի հավատալիքը տարածված էր Ակնում, Արաբկիրում, Բաբերդում, Շիրակում, Երևանում, Խարբերդում, Ղարաբաղում, Կեսաբիայում, Նոր Բայազետում, Բալուում, Շուլավերում, Քոխում, Ջավախքում, Սեբաստիայում և Մալաթիայի գրեթե բոլոր գավառներում: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ ալերը¹⁹ հիմնականում իգական ոգիներ են՝ կեսկենդանական, կեսմարդկային, փրչոտ և թավ կերպարանքով: Նրանք սովորաբար նկարագրվում են օձե մազերով (գորգոնների նման)²⁰, հրեղեն աչքերով և պղնձե մազիլներով, երկաթե ատամներով և վարագի ժանիքներով²¹: Սեբաստիայում ալին պատկերացնում էին «չարատեսիլ, երիթացած, գոս ու փոս այտերով, կարմիր, երկայն, օձագալար մազերով, ոսկրուտ, ջլապինդ ձեռքի մատները զինված պողպատյա սուր եղունգներով, երկայն, խոշոր ծիծերը ուսը նետած: Տղացկաններու կոկորդը սեղմելով, ճիկերը կը քաշէ հանէ և կը տանի ձագերուն, որոնք պզի - պզի աղաղակելով ուտելիք կուզեն»²²: Հ. Ճրլճրլյանի վկայությամբ՝ «ուրիշ կին մ'ալ կը պատմէ թէ իր դրդաձգանութեան ատեն ալն որթի մը կերպարանքով ներս մտեր է, բայց տնեցիք անմիջապէս հասկանալով՝ փայտերով վրան վազեր ու դուրս վռնտեր են»:

¹⁶ Յ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 154:

¹⁷ «Բիւրակն», 1899, թիւ 31-32, էջ 488-489:

¹⁸ Տէ ս «Բիւրակն», 1898, թիւ 34, էջ 616-617:

¹⁹ Ալին տրվում է նաև ալիպուճակ, ալապուճակ (Պոլիս), ալապուճուկ, ալիպառավ (Միլիթիս), ալայիմ հոմանիշները, որոնք նույնպէս վկայում են տվյալ ոգու իգականության մասին:

²⁰ Տէ ս Սո. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Եր., 1944, էջ 19:

²¹ Տէ ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 95:

²² Տէ ս Կ. Գաբրիլյան, Բառգիրք սեբաստահայ գավառալեզվի, Երուսաղեմ, 1952, էջ 369:

«Թեպետ բան չըրաւ, կըսէ, ինծի, սակայն թառն աման չքողոց վար թափեց, պըզտիկ թասերնիս այն ատեն ծռելով՝ դեռ շտկել տուած չենք, եթէ ուզես, կը ցուցնենք քեզի»²³:

Իրանական որոշ էթնիկ խմբերի (լաքեր, բախթիարներ, լուրեր, գալեշներ) հնագույն պատկերացումներում նույնպես ալերն ունեն նույն գործառույթը և կին կամ պատավ հիշեցնող հետևյալ պատկերը՝ խառնիխուռն, զգգզված մազեր, սուր ժանիքներ, պղնձե ճիրաններ, կախված ծծեր, կավե քիթ, հրեղեն աչքեր և ահռելի մեծ սապատ, որի վրա կրում է ծննդկանի արյունապատ լյարդը²⁴:

Ծննդկանին և մանկանը վնասող այս ոգիներին եզդիները նույնպես «այք» են կոչում: Նրանց պատկերացմամբ էլ այլ բարձրահասակ է, բարակ մեջք ունի, գլուխը փոքր է, ոտքերի և ձեռքերի մատները՝ երկար, մարմինը՝ մազոտ²⁵:

Այլ բազմաթիվ ընդհանրություններ ունի լեզգիների ալփաբի հետ, որը սպանում է ծննդկաններին՝ հանելով նրանց փորտոփքը²⁶:

Հայ հմայական և ժողովրդական աղոթքներում, մասնավորապես՝ ալի և թպղայի չար ներգործությունից պաշտպանվելու աղոթքներում ներկայացվում են ոչ միայն ալի զարհուրելի արտաքինն ու կերպարը, այլև նրա գործառույթը իբրև ծննդկանին ու նորածնին վնասող ոգի: Միայն այս տիպի աղոթքներում է, որ այլ հանդես է գալիս իբրև տղամարդ՝ «այր մի»²⁷: Այստեղ ալի դեմ պայքարողները տարբեր սրբեր կամ հրեշտակներ են, որոնք հանդես են գալիս եռյակ ձիավորների տեսքով: Նրանք շտապում են օգնել ծննդկանին և պաշտպանել նրանց չար ոգիների ներգործությունից:

Սրբերից բացի, որպես փրկարար հանդես է գալիս Մարիամ Աստվածածինը: Ըստ Ա. Իսրայելյանի՝ «Խոսքի մոզական ուժը կիրառվում էր մարդու համար վտանգավոր պահերին, տվյալ դեպքում՝ ծննդաբերության ժամանակ: Կնոջ իսկական անունը չտալով՝ պաշտպանում էին նրան չարերի ներգործությունից: Այս եղանակով չարքերին խաբելու և նրանց չարագործությունները խափանելու նպատակով հայերը երեխային կոչում էին նաև թուրքի անունով կամ տղային՝ աղջկա անունով՝ առավել ևս, որ ընդունված էր կարծել, թե աղջիկներին չարքերը չեն սպառնում ոչնչացնել»²⁸:

Ապարանում ծննդկանի անվան փոխարեն տալիս էին Աստվա-

²³ «Բիւրակն», 1898, թիւ 28, էջ 525:

²⁴ Տե՛ս Ա Մոհամմադեզա Շահբասի, Բախթիարներ: Օեսեր, հավատալիքներ, կենցաղավարություն, պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2012, էջ 10:

²⁵ Տե՛ս Ա Ամինե Ավդալ, Եզդի քրդերի հավատալիքները, Եր., 2006, էջ 45:

²⁶ Տե՛ս Ա Բեհրուզ Մոհամմադ Ռուդրարափի Քելարի, նշվ. աշխ., էջ 16:

²⁷ Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 130:

²⁸ Ա. Իսրայելյան, Խոսքի մոզական ուժը // Ենոքի ի վերուստ, Առասպել, ծես և պատմություն, Հոդվածների ժողովածու նվիրված Ա. Հարությունյանի 80-ամյակին, Եր., 2008, էջ 164-165:

ծածնի անունը՝ «Մայրամ, մը վախենա», և Աստծո կամ Քրիստոսի անունը տալով՝ աղոթում:

Չավախքում կանայք հալածում էին այլերին Հիսուս Քրիստոս անունը տալով: Այս մասին պատմում են հետևյալը. «Քրիստոս էրթցած վախտը մե ճվճվոցմ՝ կիմանա, մոտենա կանչե օր՝ ալ է, բոնե կըսե կը թը դուք ինչի՝ մտնիք կը ծննդկանների փորը, անոնց ու տղոց ջիգյարը կուտե ք: Ալը ոտքը գըյնի, կաղաչե կը թը խնայե, մեմ՝ ա չեմ էնե: Քրիստոսը չի օղորմանա: Ասոր մարը գուգա աղաչե կը թը՝ իմ մենծ տղիս բաց թող, ուր օր քու անունտ տան, մենք ոտքը չը դնենք: Շատ օր կաղաչե, Քրիստոս ա թողնե կը»²⁹:

Ժողովրդական գրույցներում հատկապես տարածված է չարերին խաչակնքելով հալածելու մոտիվը, օրինակ՝ Ատաբազարում «Այք շատ անգամ խաչակնքելով կը հալածուին»³⁰: Չարահալած մի աղոթքում ասվում է. «Եւ ապա իմացեալ կուսին, եթէ դիւական էր բանն, եհան գնշան Խաչին ի վերայ մարմնոյ իւրոյ, եւ կնքեաց զանձն: Եւ դէն հալածեցաւ եւ աներեւոյթ եղեւ ահիւ եւ դողութեամբ եւ գնաց առ Կիպրիանոս: Եւ Կիպրիանոս ասէ ցո՛ւն. «Զի՞նչ իցէ, զի երկիւղիւ դողաս եւ սասանիս»: Ասէ դէն. «Տեսի՛ գնշան Խաչին եւ երկիւղիւ դողամ եւ սասանիմ»³¹:

Վայոց ձորում ծննդկանի գլխին տղամարդու (կնքահոր) գլխարկ էին դնում, որպեսզի չարերը կարծեն, թե տղամարդ է և հեռանան³², նաև այլերի ուշադրությունը գրավելու և նրանց ծննդկանի մոտից դուրս հանելու համար սկսում էին դափ ու գուռնա նվագել³³ (թմբուկի ձայնը չարահալած նշանակություն ունի):

Երբ երկունքի ցավը խիստ էր լինում, և կինը դժվար էր ծննդաբերում, Բուլանըխում հրացան էին արձակում երդիկից կամ «ողջախոհ մի մարդու»³⁴ խոնջան (վարտիքի կամ շալվարի կապ)³⁵ տանում, ցույց էին տալիս երկնող կնոջը»³⁶, և երեխան հեշտությամբ ծնվում էր: Ապարանցի կանայք ծննդկանի փեշերի վրա զարի էին լցնում, սպիտակ ձի բերում, որ զարին տեսնի, խրխնջա, չարերը հեռանան: Հրացան էին արձակում «թունդրան ակնից», որ չարերը դուրս փախչեն (տան մեջ թոնրի ակը չարերի բնակարան էր համարվում): Ծննդկանի անկողնու չորսընթացը պատում էին պարանով, որպեսզի չարերը տեղ չունենան մոտենա-

²⁹ Ե. Լալայան, Երկեր, հ. 1, էջ 236:

³⁰ «Բիւրակն», 1899, թիւ 5, էջ 70:

³¹ «Ղարձ Կիպրիանոսի Հայրապետին», Կիպրիանոս, Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցի, Եր., 2004, էջ 62-63:

³² Տե՛ս Ե. Լալայան, Վայոց ձոր // Ազգագրական հանդես (այսուհետ՝ ԱՀ), գ. XIV, № 2, Թիֆլիս, 1906, էջ 136:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 137:

³⁴ «Այնպիսի մարդու, որու բարոյականութիւնը երբեք կասկածելի եղած չէ, և ինչպէս ժողովուրդը կասէ «խոնջան վըր հարամի չէ արձակուած», այսինքն իւր անկողնից զատ ուրիշը չէ գիտցած» (Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ // ԱՀ, գ. Ե, № 1, Թիֆլիս, 1899, էջ 123):

³⁵ Տե՛ս Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 283:

³⁶ ՀԱԲ, հ. 3, Եր., 1972, էջ 64:

լու (ծննդկանի շուրջը պարանով պատելով, զի՞՞ զծելով՝ պատավները ծննդկանին զատում էին ներկաներից ու ալքեր-չարքերից, այն է թե՛ ներսի ու դրսի տարանջատում էր կատարվում: Շրջանի ներսը համարվում էր անադարտ տարածք)³⁷: Ծննդկանի «ականջների ներս գնալը» լյարդը դուրս քաշելու նշան է, ուստի արգելելու համար տատմայրերն էլ ծննդկանի ականջներից էին քաշում: Ծննդկանի գլխի վրա՝ օդում, թրով հարվածներ էին անում և վագում առվի ջրի երեսին խփում, քանի որ իբր ծննդկանից հանած լյարդը ալերը տանում են առվի մեջ լվանալու³⁸:

Գողանալով ծննդկանի օրգանները՝ սիրտը, լյարդը, թոքերը, ըստ հին պատկերացումների, ալերը փորձում էին հնարավորինս արագ հեռանալ ծննդկանից ու հատել-անցնել առաջին հանդիպած ջրային արգելքը, սահմանը՝ առվակ, գետակ, որից հետո ծննդկանին փրկել այլևս հնարավոր չէր (ջուրը հանդիսանում է սահման այս և այն աշխարհների, կյանքի ու մահվան միջև):

Իզմիտի գավառի Արմաշ գյուղում ծննդյան պահը «անչարահալած անցկացնելու նպատակով գետնին եռանկյունաձև խրում էին նախօրոք պատրաստված երեք հատ մեծ մեխ, որոնք իրար էին միացնում կապույտ մետաքսյա ժապավենով, որն էլ ծածկում էին վարդի փշոտ թփերով: Կինը նստում էր եռանկյունու մեջ՝ դեմքով դեպի եռանկյան մի կողմը, որից հետո հեշտությամբ ազատվում էր»³⁹:

Շիրակում, ալքերի գործարույթը վերագրելով դևերին, պատմում են հետևյալ գրույցը. «Լուսահոգի տիրացու՝ Մարգարը դևերի հետ շատ էր ղոնուշմիշ էղել, նստել կայնել: Մեկ հեղըմ, ըսավ, դևերի հետ նստել խորաթա կենեինք, մեկ էլ տեսանք մեկ պզտի սև դևըմ ջիկյարը ձևոր բռնած էկավ մեկելոնց պատմեց թե՛ չիտեմ ում հարսը թագա ծննդկան է էղել, ինքը գնացել ջիկյարը գողցել բերել է: Մեկ էլ դևերն ըսել են, թե տղին ընչի չգողցար բերիր. Դե գնա ես ինչ դևի պզտի տղեն տար էնոր տեղը դիր՝ էնիկ առ արի... էլ չի կայնել, էն սհաթին գնացել մեկ ցուցանքըմ (հրեշ) տարել էնոր տեղն է դրել»⁴⁰ ու էն տղին բերել սովել է իրանց գլխավորին»⁴¹:

Աստապատում նույնպես հավատում էին, որ «չարունքը իսանի

³⁷ Այս երևույթը բնորոշ է շատ ժողովուրդների հավատալիքներին, օրինակ՝ իրանական ցեղերից Բախթիարների մոտ ծննդաբերության ժամանակ մոր և երեխայի շուրջը մի վերիս (հաստակ պարան է, որը հյուսում էին Բախթիարիի կանայք) են կապում, որպեսզի ալերը երեխային չփոխեն (տե՛ս Մոհամմադոզա Շահբասի, նշվ. աշխ., էջ 11):

³⁸ Տե՛ս Գ. սրկ. Յովսէփեանց, Փշրանքներ ժողովրդական բանահիստությունից, ժողովրդավարական նիւթեր, գ. Գ, Թիֆլիս, 1892, էջ 64:

³⁹ Վ. Բոդյան, Հողաբերքի ու տղաբերքի պաշտամունքը հայոց մեջ, թեկնածուական ատենախոսություն, Եր., 1947, էջ 234:

⁴⁰ «Սկովտիայի (Շոտլանդիա) ժողովրդական հավատալիքներում օղի ոգիները (elfe) «յաճախ կը գողնան մարդոց զուակները, և անոնց տեղ կը դնեն իրենց ծնածները: Խաբեությունն իմանալու համար, կասկածելի ծագում ունեցող պզտիկը վառ կրակի վրայ կը բռնեն, եթե փոխանակությունն իրօք տեղի ունեցած է, փոքրիկ օտարը սուր ճիչեր արձակելով՝ պիտի անհետի ծխանն ի վեր, ու ոգիները անկէ պիտի վայրաբերեն բուն մանուկը» («Բիւրակն», 1900, թիւ 32, էջ 490):

⁴¹ ԷԱԺ, հ. Ա, էջ 170:

ըրիսեն (երևիսա) կը փոխեն, իրանցը կը դնեն տեղումը: Ռուստամ ամոնց մի ըրիսայ ունին, սիրուն, նախշուն ըրիսայ: Էդ ըրիսեն ճըզտեց, ճըզտեց մեռավ: Կասին թե՛ ըրիսեն փոխել ան՝ իրանց ըրիսեն բերել, դրել, են՝ տարել: Ըրիսեն դրան թունդրան մեջ՝ սընդուումը. Թունդրան ակեն ասան՝ Ձերը տարեք, մերը բերեք: Որ չտարան, ըրիսեն բերան, դենը հանան դրան բշեոթումը. Մին թայն էլ թիթեն⁴² լցրան՝ քաշան. Մին հետ էլ ոսկոռով քաշան, մին հետ էլ կատուի բալով (ձագ),- էլի ճար չէլավ: Տարան գերեզմաննին, օխտը ադըմ փոխան ըրիսից. Թե ըրիսեն լացավ, կասեն՝ «մերն ա». Թե չը լացավ՝ «չի ապրիլ»: Ռուստամ ամոնց ըրիսեն չը լացավ՝ մեռավ»⁴³:

Բնիկ արաբկիրցիները պատմում են, թե իբր 1910-ականներին Կուզիկյանների գերդաստանում այլ մի անգամ փոխում է իր երեխան սրանց նորածնի հետ: Այս երեխային Կուզիկյանները մեծացնում են ծննդկանի կաթով: Այժմ այդ երեխան ապրում է Ամերիկայում և «այլ ու ճինի նման խորամանկ է ու կարճահասակ»⁴⁴: Ջավախքում հավատալով, թե «չարերն անկունք երեխաներին փոխում են իրենց նիհար որդիների հետ, աշխատում են կնունքը կարելվույն չափ շուտ կատարել»⁴⁵:

Չարքերի կողմից մարդու նորածին զավակին գողանալու և տեղը իրենց որդիներից մեկին դնելու մտախնայ մեզ հայտնի է դեռ Մ. Խորենացու «Հայոց պատմությունից»: Խոսելով Արտաշես արքայի որդի Արտավազդի մասին՝ Պատմահայրը գրում է, որ «ոմանք ասում են, թե հենց սրա (Արտավազդի) ծնվելու ժամանակ մի պատահաբ է եղել և կարծում են, թե Ածղահակի⁴⁶ սերունդից կանայք նրան կախարդել են, որի պատճառով Արտաշեսը նրանց շատ չարչարեց: Այդ մասին նույն երգիչներն առասպելի մեջ այսպես են ասում. «Վիշապագունները մանուկ Արտավազդին գողացան և տեղը դրին դև»⁴⁷:

Հայ ժողովրդական սնահավատական գրույցներում շատ տարածված է մարդու կողմից սաստանաներին ասեղի, մախաթի կամ քորոցի միջոցով բռնելու և իրենց ծառայեցնելու պուժեն⁴⁸: Որոշ ազգագրական շրջաններում ալերի մասին նույնպես պատմվում են նույն պուժեով գրույցներ: Շապին-Փարահիսարում, Սեբաստիայում ժողովրդի մեջ տարածված էր այն պատկերացումը, թե ով ալ բռնի, նրա տունը կհարստանա, կառատանա. «Երբ երիկմարդ մի բռնե գանի ու օձիքը

⁴² Վառելու նպատակով սարերից, արոտավայրերից հավաքած անասունների չոր գոմաղբ:

⁴³ Տ. Նավասարդեանց, նշվ. աշխ., էջ 31:

⁴⁴ Վ. Բրդյան, նշվ. աշխ., էջ 221:

⁴⁵ Ե. Լալայեան, Ջավախք // ԱՀ, գ. Ա, էջ 269:

⁴⁶ «Ածղահակի սերունդները վիշապագուններ էին, որովհետև Ածղահակ մեր լեզվով նշանակում է վիշապ» (Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 118):

⁴⁷ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 195:

⁴⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Գալստյան, Սատանան հայ ժողովրդական սնահավատական գրույցներում, Գիտական աշխատություններ, հ. XIV, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Եր., 2011, էջ 92-105:

մեծ ասեղ մը խոթէ, չի կրնար այլևս փախչիլ և տնական գործերը ամենայն արագությամբ կկատարէ, երբ խմոր գնտէ, տաշտին խմորը չի հատնիր, մինչև որ տանտիկինը «Հերիք է» չըսէ»⁴⁹: Ափկոպուլիսում պատմվող գրույցներից մեկի համաձայն՝ ալին, որին գերի են դարձրել, խմոր են շաղել տվել և օրերով, ամիսներով այդ խմոր «հաց են եփեր ու չի հատեր»: Մինչև որ մի անձանոթի հանդիպելիս օձիքի ասեղը հանել է տվել ու անհետացել, իսկ խմորն ու հացը մոխիր են դարձել⁵⁰:

Ժամանակին Պարտիզակ գյուղում մի պատավ ճանապարհին մի սիրուն աղջիկ է գտնում, որը լաց լինելով ասում էր. «Իմ մամաս տըրհա ճիկեար չի բերավ»: Պատավը խղճում է աղջկան ու տանում իր տուն: Մի գիշեր այլ զալիս է և պատավի դուռը թակելով՝ պահանջում իր աղջկան: Ալի կինը բարկանում է, երբ տեսնում է, որ գեղեցկության համար աղջկա ճակատի մազերը կտրել են: Ջայրանում է այլ և ասում. «Ձեզի գեշ բան չեմ րսեր, մինակ ասկե ետքը ձեր տանը մեջ հողե սաղ աման չի ըլլա»⁵¹: Եվ պատմում են, որ այդ տանը տարիներ շարունակ ամանեղենը ճաքած ու ջարդված է եղել. այդ գերդաստանը հայտնի էր Պարտիզակում⁵²:

Մալաթիայում հավատում էին, որ «Ալին տունեն ներս մտնելուն էթե ձեռքի երկաթը գետին ձգվեր, Ալը ինքզինքը ցույց կուտար բարի էակի կերպարանքով և ետ այնու կը լիներ տունին գերին, ստրուկը, պահապան հրեշտակը, թե շատ անգամներ նա կերթար օտար քաղաք, կաշխատեր որպես մարդ և քիչ ատենեն ետ կուգար հարստությունով: Ալեան ընտանիք մը կար, կը պատմեին, թե մեծ մայրերնին ալ մը բռնած էր այդպես և անոր բերած բարիքներով կապրեին»⁵³: «Բայց հազար էր նեկ այդ Ալքը բռնուած տանը: «Եղեն թող լըլեն մերդեն թող խմեն»: Անոր ձեռքը դրած բարին (ուտելիքներ) ալ հատնում չունենար օր»⁵⁴:

Կեսարիայի Մունճուսուն գյուղում այլ պատկերացվում է որպես մի դեռատի հարս, որը, ճնշելով ծննդկանին, հանում է վերջինիս թոքը, գցում ջրի մեջ և սպանում նրան: Եթե այդ միջոցին ծննդկանին հաջողվի կծել ալի մատը, ապա վերջինիս կհպատակեցնի իրեն և կչեզոքացնի ալից սպասվող վտանգը: Ալին հաղթած ծննդկանի տնից ձեռք բերված լաթի կտորը, դնելով այլ ծննդկանների բարձի տակ, հնագույն պատկերացումների համաձայն, կարելի էր խուսափել ալից սպասվող չար ներգործությունից⁵⁵:

Մարզվանում մի ծերունի հանդիպում է ալին, որը գնում էր ծննդկանի թոքը ջրի մեջ լվանալու: Մարդը հրամայում է ալին թոքը

⁴⁹ Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 210:

⁵⁰ Տե՛ս «Բիւրակն», 1900, թիւ 15, էջ 232-233, թիւ 39, էջ 621:

⁵¹ «Բիւրակն», 1899, թիւ 34, էջ 542:

⁵² Տե՛ս նույն տեղը:

⁵³ Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէրոս, 1961, էջ 1149:

⁵⁴ «Բիւրակն», 1900, թիւ 15, էջ 232:

⁵⁵ Տե՛ս «Բիւրակն», 1899, թիւ 31-32, էջ 488:

տանել հետ, բայց նա, մարդուն չլսելով, շարունակում է ճանապարհը: Ծերունին բարկանում է և մոտից մի մախաթ է հանում ու մոցնում այի վիզը: Այր դառնում է ջորի և ծերունին յոթ տարի շարունակ բանեցնում է ջորուն: Ջորին շատ է աղաչում ծերունուն իրեն ազատ արձակել, փոխարենը խոստանում է, որ ծերունու յոթը սերունդին չի «կոխի»: Ծերունին, հավատալով այի խոսքին, մախաթը վզից հանում է, և այն անմիջապես աներևութանում է:⁵⁶:

Բացի իր հիմնական գործառույթից՝ այլ ժողովրդական գրույցներում հանդես է գալիս նաև այլ դրսևորումներով: Գողթան գավառում եթե երեխան չեր քնում, պլերով էին վախեցնում, ասելով՝ «Օլը (այլը) ալկալ ա, քուն ըլի»⁵⁷, իսկ Պոլսում սպառնում էին՝ «Ալապուճուկը եկավ. հիմա քեզի ալապուճուկին կուտամ»⁵⁸:

Բուլանըխում ային⁵⁹ պատկերացնում էին որպես մարդու փորից կերակուր քաշող, շնաքաղցի մատնող, երեխաների վրա ազահույթուն թափող հրեշ, այսինքն՝ նույնացվում էր դովտի⁶⁰ հետ: Դրա համար էլ շատակեր երեխաներին «կերպարանքն ի վեր բաբա չափելով ասում էին. «Օ՛շ, ալքն իս քաշի փորիդ» կամ՝ «Ալք իս, ի՞նչ իս, չրս կշտանա»⁶¹: Նոր Բայազետում նույնպես «շատակեր» բառին հոմանիշ օգտագործվում էր «ալք» կամ «ալք կնմանի» արտահայտությունը⁶²:

Շապին-Գարահիսարում «ալքու կոխած» կամ «ալքու փոխած կը նմանի» ասելով՝ ի նկատի ունեին շատ նիհար, հիվանդոտ ու տզեղ երեխա⁶³:

Երբ մի բան հանկարծ կորչեր, ասում էին՝ «ալոց գալոց» եղավ կամ «ալուգալ» եղավ, որը, անշուշտ, կապվում է այի անվան հետ⁶⁴: Ախալցխայում ալալոց կամ ալալոց-թալալոց ասելով՝ նկատի ունեին «պատահելիք արկած, փորձանք մը, որ գլխուն պիտի գայ»⁶⁵:

Համշենցիների պատկերացմամբ էլ՝ «այլ մի աներևույթ ոգի է, որ երբեմն գիշերները գալիս նստում է քնած մարդկանց վրա, վրաներն այնպես ծանրանում, որ մարդը տակը չի կարողանում շարժվել: Դրան

⁵⁶ Տե՛ս «Բիրակն», 1899, թիւ 42, էջ 667-668:

⁵⁷ Ե. Լալայեան, Գողթն // ԱՀ, գ. XII, Թիֆլիս, 1905, էջ 142:

⁵⁸ ՀԳԲ, էջ 53:

⁵⁹ Ըստ Մտ. Մալխասյանցի՝ «ային» հոմանիշ է «շատակեր» բառը՝ «Այս երեխան ալք է: Անկուշտ էս, ալքն է քաշում փորիցդ» (Մտ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, էջ 19):

⁶⁰ Բուլանըխում «ալքի» հետ հիշատակվում է նաև «դովտը», որը գործածվում է ազահ մարդուն բնութագրելիս (տե՛ս Բենսէ, Բուլանըխ կամ Հաբք գաւառ // ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 11): Այրարատից, Շիրակից և Հայաստանի ազգագրական այլ շրջաններից գրառած հայ ժողովրդական հեքիաթներում նույնպես հանդիպում ենք «դովտ» երևակայական հրեշին (տե՛ս ՀԺՀ, հ. I, «Ոսկե քարով տղի հեքիաթը», Եր., 1959, էջ 241-268, ՀԺՀ, հ. II, «Զակ-Փոլադ», Եր., 1959, էջ 50-81 և այլն):

⁶¹ ՀԱԲ, էջ 61:

⁶² Տե՛ս ՀԳԲ, էջ 53:

⁶³ Տե՛ս նույն տեղը, էջ 53:

⁶⁴ Տե՛ս Բենսէ, Բուլանըխ կամ Հաբք գաւառ // ԱՀ, գ. Զ, էջ 11:

⁶⁵ ՀԳԲ, էջ 49-50:

«ալնիստ» են ասում: Այս երևույթից ազատվելու համար պետք է բույթ մատր շարժել, պառկած տեղը զլիսի տակն էլ «Կիպրիանոս» դնել»⁶⁶: Այստեղ ալը նույնանում է խրպրլիկ⁶⁷ և գաբուս⁶⁸ կոչվող երևակայական էակների հետ, որոնց հիմնական գործառույթներն են քնած ժամանակ մարդու վրա ծանրանալը, մարդուն քնահարամ անելը, մղձավանջի մեջ զցելը: Ալի այս գործառույթները տարածված էին նաև Քղիի ժողովրդական հավատալիքներում: Նրանք կարծում էին, որ «ալք աներևույթ էգ գաճաճներ են, որոնք զիշերը մեծ բազմությամբ կլցվին առավելապես քնացող պատանիներու և երիտասարդներու վրա և կչարչարեն զանոնք խեղդելու աստիճան»⁶⁹: Պարսկահայերի բնութագրմամբ էլ՝ «Ալ կամ ալք ութօրեայ աստակիչ տենդ է որդեժին կանանց: Կերևի թե նախնիք այս տենդն չար էակ մի ճանչցած են»⁷⁰:

Այսպիսով՝ ալն իր գործառութային նշանակությամբ օժտված է չարքերին բնորոշ բոլոր հատկություններով: Ժողովրդական գրույցներում հանդես է գալիս որպես անձնավորված ոգի, ունի արտաքինի հատակ նկարագրություն (օձե մազեր (գորգոնների նման), հրեղեն աչքեր, պղնձե մազիկներ, երկաթե աստամներ, վարազի ժանիքներ և այլն), սեռ (ալք բացառապես իգական սեռի է և հանդես է գալիս տարբեր տարիքի կանանց՝ աղջկա, դեռատի հարսի, բազմազավակ մոր կերպարներով: Միայն ժողովրդական աղոթքներում է, որ ալք հանդիպում է տղամարդու կերպարով՝ «այր մի», կամ իբրև երեխա՝ իր մոր հետ) և զբաղմունք (ծննդկանի թոքի կամ լյարդի գոդությունը, կնոջ արգանդում սաղմի ոչնչացումը, նորածնին փոխելը իրենց վտիտ, նիհար ու տգեղ դիվուկի հետ) և այլն: Ալք՝ որպես ծննդկանին ու նորածնին վնասող ոգի, իր չարագործությունները կատարում է ծննդյան պահից սկսած և վտանգ է ներկայացնում վերջիններիս համար մինչև երեխայի քառասունքը լրանալը: Ալերից պաշտպանվելու միջոցը չարահալած հատկանիշ ունեցող իրերի առկայությունն էր ծննդի պահին և հետծննդյան քառասնօրյա շրջանում, որոնց կիրառությունն ու օգտագործումը ուղեկցվում էին որոշակի ծիսական գործողություններով:

Ելնելով մեր քննած նյութերից (առասպելներ, հեքիաթներ, ժողովրդական գրույցներ, աղոթքներ, դաշտային բանահյուսական և ազգագրական նյութեր, ուսումնասիրություններ)՝ փաստում ենք, որ ծննդկան կնոջ և նորածնին երեխայի թշնամի համարվող չար ոգիներից մեկի՝ ալի հավատա-

⁶⁶ Բենսե, Բուլանըխ կամ Հարք գաւառ // ԱՀ, գ. Զ, էջ 140:

⁶⁷ Տե՛ս Յ. Ճանիկեան, նշվ. աշխ., էջ 154-155:

⁶⁸ «Գաբուսն էն է, որ զիշերները կը գաբի (պարկել, ծնկան գալ մեկի վրայ) վըր մարդու բօկին՝ օր գմարդ խեղդէ: Էնվախտ օր Գաբուս կիջնայ վըր քրզի քանի կոնաս գօր տու յկի, առ զընդրա թզպեղն տար եցկէ (անցուր) կժան բերան, եղ հըմալ օր երիբ՝ Գաբուս կը դառնայ մարդու օրինակ, կեղնի քրզի հետիր (գերի)» (Բենսե, Բուլանըխ կամ Հարք գաւառ // ԱՀ, գ. Զ, էջ 10):

⁶⁹ «Բիւրակն», 1898, թիւ 14, էջ 296:

⁷⁰ Յ. Ճանիկեան, նշվ. աշխ., էջ 154:

լիքը ունի հնագույն ակունքներ և լայնորեն տարածված է ոչ միայն Հայաստանի ազգագրական գրեթե բոլոր շրջաններում, այլև քրիստոնյա և մահմեդական շատ ժողովուրդների հավատալիքներում (Երան, Միջին Ասիա, Կովկաս, Ռուսաստան և այլն): Ամենուր նույնն են կամ չափազանց նման ոգու թե՛ արտաքին նկարագրությունն ու գործառույթները և թե՛ նրանից զգուշանալու կամ պաշտպանվելու միջոցներն ու եղանակները:

Բանալի բառեր – *ալ, ոգի, դև, ծննդյան, նորածին, երկաթյա իրեր, սնահափառական գրույց*

АСМИК ГАЛСТЯН – *Al в армянских народных суеверных рассказах.* – Речь в статье идёт об одном из духов (*ал*), фигурирующих в армянских народных суеверных сказаниях и поверьях. Он причиняет вред роженицам и новорождённым младенцам. По своему функциональному назначению *Ал* наделён всеми качествами, присущими в народных сказаниях злым духам. Он выступает олицетворённым – с определённой внешностью, полом, занятием и т.п. Истоки этого верования уходят в древнейшие времена, оно было широко распространено не только во всех этнографических районах Армении, но и в верованиях многих христианских и мусульманских народов (Иран, Средняя Азия, Кавказ, Россия и др.). Везде одинаковы либо максимально схожи как внешнее описание и функции духа, так и средства и методы предостережения или защиты от него.

Ключевые слова: *ал, дух, демон, роженица, новорождённый, железные предметы, суеверные рассказы*

HASMIK GALSTYAN – *Al in the Armenian Superstitious Stories.* – This article presents one of the spirits named *al*, who appears in the Armenian folk superstitious stories and beliefs. He harms women in childbirth and newborn children. *Al* was endowed with all qualities, characteristic of evil spirits. In folk stories he acts as a personified spirit, has a certain description of appearance, gender, occupation etc. *Al*'s belief has ancient roots and was widespread not only in all ethnographical regions of Armenia but also in the beliefs of many Christian and Muslim people (Iran, Middle Asia, Caucasus, Russia etc.) The description of appearance and functions of that spirit as well as the methods and ways of caution or protection from him are identical everywhere, or extremely similar.

Key words: *al, spirit, demon, women in childbirth, newborn children, iron items, superstitious stories*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Յուրի Գաբրիելյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ
Юрий Габриелян – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой немецкой филологии ЕГУ
Yuri Gabrielyan – Sc. D. in Philology, Professor, Head of the Chair of Germanic Philology, YSU
Էլ. փոստ՝ yuri.gabrielyan@ysu.am
2. **Հրաչիկ Միրզոյան** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի պրոֆեսոր, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր
Грачи́к Мирзоя́н – доктор философских наук, профессор кафедры истории философии ЕГУ, главный редактор журнала «Вестник Ереванского университета»
Hrachik Mirzoyan – Sc. D. in Philosophy, Professor of the Chair of History of Philosophy, YSU, Editor-in Chief of the Bulletin «Banber Yerevani Hamalsarani»
Էլ. փոստ՝ hmirzoyan@ysu.am
3. **Լիլիթ Մկրտումյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ, բանահյուսության տեքստաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող
Лилит Мкртумян – младший научный сотрудник, соискательница Института археологии и этнографии НАН РА
Lilit Mkrtumyan – Dissertee of the Institute of Archaeology and Ethnography NAS RA, Junior Researcher at the Department of Folklore Textology
Էլ. փոստ՝ lilushmkrtumyan@yahoo.com
4. **Հասմիկ Գալստյան** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ, բանահյուսության տեքստաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող
Асмик Галстян – младший научный сотрудник, соискательница Института археологии и этнографии НАН РА
Hasmik Galstyan – Dissertee of the Institute of Archaeology and Ethnography NAS RA, Junior Researcher at the Department of Folklore Textology
Էլ. փոստ՝ gasmik@mail.ru
5. **Արսեն Գլջյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, Հայաստանի ազգային ազրարային համալսարանի հայոց պատմության և փիլիսոփայության ամբիոնի դոցենտ
Арсен Глджян – кандидат филологических наук, доцент кафедры армянской истории и философии национального аграрного университета Армении
Arsen Gljyan – PhD, Associate Professor of the Chair of Armenian History and Philosophy, Armenian National Agrarian University
6. **Ռուբեն Միրզախանյան** – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր
Рубен Мирзаханян – доктор исторических наук, профессор, ректор Армянского государственного педагогического университета
Ruben Mirzakhanyan – Sc. D. in History, Professor, rector of the Armenian State Pedagogical University

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

<i>Յուրի Գաբրիելյան</i> – Հայերի և հայերենի ծագման խնդիրների ըստ լեզվաբանական և գենետիկական տվյալների.....	3
<i>Юрий Габриелян</i> – Проблемы происхождения армян и армянского языка в сопоставлении лингвистических и генетических данных	
<i>Yuri Gabrielyan</i> – The Problems of the Origin of the Armenians and the Armenian Language with Comparison of the Linguistic and Genetic Data	
<i>Հրաչիկ Միրզոյան</i> – Մատյաննոմ <i>բեկ</i> արմատով բառերի գործածության բնութայուն 14	14
<i>Грачик Мирзоян</i> – Анализ употребления в «Книге скорбных песнопений» слов с корнем <i>-лом</i>	
<i>Hrachik Mirzoyan</i> – Analysis of the Words with the Root <i>bhreg-</i> (<i>բեկ</i>) in the “Book of Lamentations”	
<i>Լիլիթ Մկրտումյան</i> – Կենդանակերպ տրիքստերի շուրջ միավորված հայկական հեքիաթների բովանդակային-կառուցվածքային առանձնահատկությունները 29	29
<i>Лилит Мкртумян</i> – Содержательно-структурные особенности армянских сказок о зооморфном трикстере	
<i>Lilit Mkrtyumyan</i> – Contextual and Structural Specifics of the Armenian Tales about Zoomorphic Trickster	
<i>Հասմիկ Գալստյան</i> – Այլ հայ ժողովրդական սեռահավատական գրույցներում..... 42	42
<i>Асмик Галстян</i> – Ал в армянских народных суеверных рассказах	
<i>Hasmik Galstyan</i> – Al in the Armenian Superstitious Stories	
<i>Արսեն Գլջյան</i> – Հակոբ Պարոնյանի ծիծաղը 54	54
<i>Арсен Глджян</i> – Смех Акоба Пароняна	
<i>Arsen Gljyan</i> – Hakob Paronyan’s Laughter	
<i>Րուբեն Միրզախանյան</i> – Կերպարվեստը և ճարտարապետությունը Հայաստանում 1925-1932 թթ. 69	69
<i>Рубен Мирзаханян</i> – Живопись и архитектура в Армении (1925–1932)	
<i>Ruben Mirzakhanyan</i> – Painting and Architecture in Armenia (1925 – 1932)	
Տեղեկություններ հեղինակների մասին 80	80
Сведения об авторах	
Information about the Authors	

«Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Арменоведение" выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Armenian studies" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107

Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107

Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Գայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 15. 03. 2017:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսետի:
Տպագրական 5 մամուլ:

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Технические требования к статьям, представляемым для публикации в журнал «Вестник Ереванского университета»:

- в начале статьи ставится заглавие (прописными буквами),
- в следующей строке – имя и фамилия автора (прописными буквами), после статьи указывается учёная степень и научное звание автора, место его работы и занимаемая должность, а также номер его телефона и адрес электронной почты (номер телефона и электронный адрес публикуются с согласия автора),
- поля: сверху – 25 мм, снизу – 25 мм, справа – 25 мм, слева – 20 мм,
- шрифт армянского текста – Sylfaen,
- шрифт английского текста – Times New Roman,
- шрифт русского текста – Times New Roman,
- шрифтовой размер основного текста – 11,
- интервал между строками – 1,5,
- ширина графиков, таблиц и рисунков – до 125 мм
- сноски даются подстрочно, нумерация – порядковая, размер шрифта – 10, указываются автор источника, заглавие, номер тома, место и дата издания (у периодических изданий также номер) и страница,
- статью можно представлять на армянском, русском или английском языке, к ней должно быть приложено резюме на двух других языках и до десяти ключевых слов,
- отклоненные статьи не возвращаются,
- редакция может поместить опубликованные статьи в армянских и зарубежных сборниках и на интернет-сайтах без каких-либо правовых ограничений.

NOTICE TO AUTHORS OF PAPERS

To submit papers to “Banber Yerevani Hamalsarani”, the authors should meet the following technical requirements:

- The title of the paper should be typed in upper case letters at the top of the page;
- The next line should present the author's name and family name in upper case letters. The author's degree and title, workplace, position, telephone number and electronic mail should be mentioned at the bottom of the paper (the telephone number and e-mail are published by the author's consent);
- Page margins should be as follows: top 25 mm, bottom 25 mm, right 25 mm, and left 20 mm;
- The Armenian font for the paper should be Sylfaen;
- The English font for the paper should be Times New Roman;
- The Russian font for the paper should be Times New Roman;
- The size of the font should be 11;
- The spacing between the lines should be 1.5;
- The width of charts, tables and images should be 125 mm;
- The references should be provided as footnotes, the numbering – ordinal, the references should include the author's name, title, volume, the place of publication and date (in case of periodicals, the issue should also be mentioned). The font size for references should be 10;
- You are welcome to submit your paper in Armenian, English, or Russian along with abstracts in two other languages and up to 10 key words in three languages.
- Rejected papers are not returned;
- The editorial staff can insert the published articles in Armenian and foreign electronic databases and Internet sites without any legal restrictions.

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսում տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները

- հոդվածի սկզբում դրվում է վերնագիրը (գլխատառերով)
- հաջորդ տողում՝ հեղինակի անուն, ազգանունը (գլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ),
- տեքստի լուսանցքները, վերև՝ 25 մմ, ներքև՝ 25 մմ, աջ՝ 25 մմ, ձախ՝ 20 մմ,
- հայերեն շարվածքի տառատեսակը՝ Sylfaen,
- անգլերեն շարվածքի տառատեսակը՝ Times New Roman,
- ռուսերեն շարվածքի տառատեսակը՝ Times New Roman,
- հիմնական տառաչափը՝ 11,
- միջտողային ինտերվալը՝ 1.5,
- գրաֆիկների, աղյուսակների և նկարների լայնությունը՝ մինչև 125 մմ,
- հղումները տրվում են տողատեսակով՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում նաև համարը) և էջը,
- հոդվածը կարող է ներկայացվել հայերեն, անգլերեն կամ ռուսերեն, այն պետք է ունենա մյուս երկու լեզուներով ամփոփում և երեք լեզվով մինչև 10 բանալի բառեր,
- մերժված հոդվածը չի վերադարձվում,
- խմբագրությունը կարող է տպագրված հոդվածները զեփոփել հայաստանյան և արտերկրյա էլեկտրոնային շտեմարաններում և համացանցային կայքերում առանց օգտագործման իրավունքի սահմանափակման: